եւ ամբոխն սկսեալ թէ Ի սորայ հետ մեծագոյն չար կայ, որպէս այն չար և ի բնէ սատանայ Էսիլի թոռն, զնա այլ բերէք թէզ և չուտով, որ զսոյն արասցուք և զպատիժն տացուք։ Եւ Տէրտէրն իմ և Յարութիւնն զայն մոռցուցին ասելով թէ Զնորա պատիժն տեսեալ եմք և տեսանելոց եմք յետ աւուրցս ինչ։ Եւ նոյն ժամայն ել գաղտ արտաքս չարն Կարապետ և խորհուրդ արարեալ ընդ Յովանէս երիցուն մեծի թէ Դու երաշխաւորեա՛ որ տամ ձեռագիր սոցա թէ Այլ չառնեմ զգործս, և բարեխօսեա՛ առաջակայ իշխանացն. և եկեալ նա և ասացեալ Ա. Բ հոգոյ, ելին ի դուրս. և գրեալ էր թէ Ես այս ինչ՝ այլ այսպիսի գործոյ մէջն չխառնիմ, ինչ որ ասինք հետ Էսիլի տղին և Ճիհէնտէմին, այլ նոցա հետ չը խօսիմ, և թէ խօսիմ կամ խառնիմ, հախէս եկէք։ Եւ զայս տեսեալ ամբոխն՝ ծիւ ծիւ արարեալ զթուղթն եւ ի յերեսն ձգեալ թէ Մեզ ձեռագիր չպիտի։ Եւ ի պահուս եկն Տէր Յակոբն գոռալով եւ աղաղակելով թէ Զը գտայ, մարդի՛ք, չգիտեմ թէ ո՛ւր է գրել[1]) հիւճէթն. և նոքա հաւատացին. և ասացեալ ամբոխն՝ Թո՛ղ, չի պիտի, մեք առանց հիւճէթի կու տանիմք զդա և գրել կու տամք թէ Մեզ պարտի ճ զուռուշ և դնեմք ի բանտ, մինչև գայ Աստուածատուր վարդապետն։ Եւ մի կողմն ամբոխին զայն ասացողն նախատեցին թէ Վասն էՙր պահեմք, այլ տանիմք վկայիւք թէ Չար է և չարագլուխ, ի մեր մէջն չենք զապուլ աներ. գրել տանք ի թին կամ քշենք ի հեռու։ Եւ ոմանք ասացին թէ Մինչև ի կենաց չի բարձուի, այլ չարեացն խրատ չի լինիր։ Եւ ըմբռնեալ զսա տանել, և ժողովուրդն երթայր զկնի և ընդ առաջ, և տարան մինչև ի դարագլուխն Ֆիլսարային, և ինքն ասէր թէ Տամ ձեռա-

1) դր.